ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2015 թվականի թիվ 46 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2015թ. մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N 35-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին» N 202- Ա որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի հաստիքացուցակում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) հաստիքացուցակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.

«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 70-3.1-17)».

2) հաստիքացուցակից հանել հետևյալ տողը.

«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի Իջևանի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 70-4.1-14)»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

2015թ.մարտի 16
ք.Իջևան